

## «ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԽԱՉՍԵՐՈՒԿՆԵՐՈՒՄ»

2009 թվականի հունիսի 11-14-ը Երևանի պետական համալսարանը հյուրընկալեց աշխարհի 50 երկրներից ժամանած ժամանակակից սոցիալական գիտության 380 ներկայացուցիչների աշխարհի 90 հանրահայտ բուհերից և գիտահետազոտական կենտրոններից, որոնք եկել էին մասնակցելու Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի 39-րդ համաշխարհային կոնգրեսին: Այն համակազմակերպել էին Երևանի պետական համալսարանն ու Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումը: Իրենց մասնակցությամբ կոնգրեսը պատվել էին սոցիոլոգիայի բնագավառի անվանի գիտնականներ Իմանուել Վալերստեյնը (ԱՄՆ Յեյի համալսարանի դասախոս, Ֆերդինանդ Բրաուդելի անվան տնտեսական գիտությունների ուսումնասիրման կենտրոնի տնօրեն), Էդվարդ Թիրաքյանը (ԱՄՆ Հարվարդի, Դյուքի համալսարանների դասախոս, սոցիոլոգիայի և մարդաբանության ամբիոնի վարիչ), Քրեյգ Քելիհունը (Նյու Յորքի, Կոլումբիայի, Օսլոյի համալսարանների դասախոս, Նյու Յորքի համալսարանին կից Հասարակական գիտության ինստիտուտի նախագահ), Միշել Վիվյորկան (Սոցիոլոգիական միջազգային ասոցիացիայի նախագահ), Բյորն Վիտրոկը (Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումի և Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի նախագահ), Յեհուդա Էլկանայը (Կենտրոնական եվրոպական համալսարանի ներկայացուցիչ), Փիթեր Հեդսթրոմը (Օքսֆորդի և

Սինգապուրի կառավարման համալսարանների ներկայացուցիչ, Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի գլխավոր քարտուղար, Սոցիոլոգիայի եվրոպական ակադեմիայի նախագահ), Շալինի Ռանդերիան (Յյուրիխի համալսարանի դասախոս, սոցիալական մարդաբանության եվրոպական ասոցիացիայի նախագահ) և այլք:

Քառօրյա կոնգրեսն անցկացվեց «Սոցիոլոգիան խաչմերուկներում» խորագրի ներքո: Հայաստանը, յուրօրինակ խաչմերուկ լինելով արևմտյան և արևելյան, ավանդական և արդի սոցիոլոգիայի համար, կոնգրեսի մասնակիցներին հնարավորություն ընձեռեց նորովի իմաստավորելու այդ գիտության տեսական և գործնական զարգացումները: Տարբեր գիտական և հետազոտական ուղղությունների համախմբումը սոցիոլոգիական մտքի խաչմերուկում նպատակ ուներ ստեղծելու նպաստավոր միջավայր, որպեսզի գիտության զարկերակը նորովի բարախի՝ բազմակողմանի մոտեցումներ առաջարկելով արդի ժամանակաշրջանի մարտահրավերներին դիմակայելու համար:

Բացելով համաժողովը՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ մարդկության պատմության ներկայիս ժամանակահատվածը ծնում է աշխարհում տեղի ունեցող սոցիալական երևույթների պրոֆեսիոնալ մեկնաբանման անհրաժեշտություն: *«Մենք հուսով ենք, որ կոնգրեսը կօգնի մեզ մոտենալու մեզ հուզող հարցերի պատասխաններին. արդյոք ներկայիս ճգնա-*

ժամը սոցիալական է, քե՞ս այն ֆինանսաստնտեսական բնույթի է: Հնարավոր է արդյոք ուրվագծել համակեցության նոր շրջանակները, ինչպիսի՞ն է պոստ-ինդուստրիալ աշխարհի ձևավորման ճանապարհը: Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենալու ազգերի ինքնակազմակերպման ձևերի և բովանդակության միջև: Կա՞րողոք նոր պարադիգմ, որն ապահովում է բազմազանությունների համերաշխ համակեցությունը: Հնարավոր է գտնել նույնականացման բանաձևերը ազատ մտածողության դարաշրջանում: Հուսով եմ, որ կոնգրեսի կազմակերպիչների ջանքերի շնորհիվ ստեղծված մթնոլորտը, և մասնակիցների մասնագիտական բարձր մակարդակը լավ նախադրյալներ են, որ կոնգրեսի ընթացքում ծնվեն նոր, առաջադեմ գաղափարներ, և ընդլայնվեն յուրաքանչյուր մասնակցի աշխարհընկալման շրջանակները», - ասաց վարչապետը:

Բացման արարողությանը կոնգրեսի մասնակիցներին ողջունեցին նաև ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Միմոնյանը, Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումի և Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի նախագահ Բյորն Վիտրոկը, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը և Սոցիոլոգիական միջազգային ասոցիացիայի նախագահ Միշել Վիվյորկան:

Համաժողովի մասնակիցներին ողջունի խոսքում ԵՊՀ ռեկտոր Արամ Միմոնյանը ասաց.

«Կրթությունը և մշակույթը դարերի վեր կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի ազգային և կրոնական ինքնությունը պահպանելու գործում: Այդ առումով անուրանալի է կրթական հաստատությունների դերը: Կրթօջախներ, որոնց արժանի ժառանգորդն

եղավ հայոց համալսարանը, որի 90-ամյակն ենք նշում այս օրերին: Ուստի մեզ համար նշանակալից է այսպիսի կարևորագույն իրադարձության կենտրոնում գտնվելը: Վստահ եմ, որ կոնգրեսը հնարավորություն կընձեռի ավելի լավ հասկանալու աշխարհը, տեղի ունեցող փոփոխությունները և մեզ առաջադրվող մարտահրավերները»:

Բյորն Վիտրոկը, գնահատելով ԵՊՀ-ի հարուստ գիտական ներուժը, մասնավորապես նշեց. «Մենք հավաքվել ենք այստեղ՝ քննարկելու սոցիալական գիտությունների տեսական և մեթոդաբանական նվաճումները, մարդկության առջև ծառայած արդի երկրներանքները, գլոբալ ճգնաժամը և դրա հետևանքներն ու հաղթահարման հնարավորությունները, հասարակությանը, անձին և պետությանը նետված մարտահրավերները, ժամանակակից աշխարհում դե-ֆակտո պետությունների, ցանցային հասարակության առանձնահատկությունները, հետխորհրդային երկրների արդիականացման գործող մոդելները, ցեղասպանության, զանգվածային բռնության և պատերազմի հիմնահարցերը և արդի ժամանակաշրջանի բազում այլ կարևոր հիմնախնդիրներ»:

Միշել Վիվյորկան, ողջունելով ներկաներին, համառոտ ներկայացրեց հասարակական կյանքում, ինչպես նաև ճգնաժամերի հաղթահարման հարցերում սոցիոլոգիայի դերի ու նշանակության վերաբերյալ իր պատկերացումները:

Իսկ պրոֆեսոր Լ. Հարությունյանը նկատեց. «20-րդ դարը մեր ժողովրդի համար խոչընդոտներով լի ժամանակաշրջան է եղել: Մենք դիմակայել ենք բնության արհավիրքներին, տնտեսական ու սոցիալական խորը ճգնաժամերին, սակայն այսօր ունենք պետականություն և գիտական լուրջ նե-

րուծ: Կարող է արդյոք գտնվել մի սոցիոլոգ, որը կրացատրի, թե ինչպես ենք մենք հաղթահարել այդ ամենը: Այստեղ հավաքված բարձրակարգ մասնագետների համար, կարծում եմ, սա արժանի մարտահրավեր է: Վստահ եմ, որ Հայաստանը սոցիոլոգիայի համար կարևոր լաբորատորիա կարող է հանդիսանալ»:

Հետագա օրերին կայացած հարյուրից ավելի լիագումար, հատուկ և թեմատիկ նիստերի և կլոր սեղանների ընթացքում քննարկվեցին սոցիոլոգիական մտքի մարտահրավերներին, սոցիալական գիտության արդի զարգացումներին ու միտումներին նվիրված, ինչպես նաև սոցիոլոգիայի առջև ծառայած առանցքային հարցեր: Այս ամենը համակարգելու նպատակով ձևավորվել էր կոմիտե, որի անդամներն էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումի և Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի նախագահ Բյորն Վիտորկը, Նյու Յորքի համալսարանի ներկայացուցիչ Բրեյզ Բելհոունը, Կենտրոնական եվրոպական համալսարանից Յեհուդա Էլկանայը, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը, Սիջազգային սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Հանս Յոասը, Ցյուրիխի համալսարանի ներկայացուցիչ, Սոցիալական մարդաբանության եվրոպական ասոցիացիայի նախագահ Շալինի Ռանդերիան, ինչպես նաև Սոցիոլոգիայի եվրոպական ակադեմիայի նախագահ Փիթեր Հեդսթրյոմը:

Կոնգրեսի մասնակիցների ուշադրության կենտրոնում էին սոցիալական գիտությունների տեսական և մեթոդաբանական նվաճումները, մարդկության առջև ծառայած արդի երկրորդականները, մարտահրավերները, գլոբալ ճգնաժամի պատճառների վեր-

հանման ու դրա հետևանքների հաղթահարման ուղիները, սփյուռքի և հայրենիքի փոխհարաբերությունները, ցեղասպանության, զանգվածային բռնության և պատերազմի հիմնահարցերը և արդի ժամանակաշրջանին հատուկ բազում այլ կարևոր հիմնախնդիրներ:

Ծավալված բուռն քննարկումները հնարավորություն տվեցին ծանոթանալու և վերլուծելու վերոհիշյալ հիմնահարցերը տարբեր դիտանկյուններից, ուսումնասիրելու այս կամ այն խնդրի լուծման տարբեր ուղղությունները, համադրելու սոցիոլոգիական մտքի տարբեր ավանդույթները և միտումները, որոնք, մասնակիցների խորը համոզմամբ, կնպաստեն սոցիալական գիտության նոր հորիզոններ բացելուն:

ԵՊՀ-ում անցկացված 39-րդ համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսը իրավամբ մեծ նվաճում էր ոչ միայն հայ սոցիոլոգների, այլև քաղաքագետների և այլ հումանիտար գիտությունների ներկայացուցիչների համար, քանի որ ներկայումս այն նույնպես կանգնած է հնի ու նորի խաչմերուկում, և նրա առջև ծառայած է սոցիոլոգիական մտքի վերաիմաստավորման ու նորովի հաստատման կարևորագույն խնդիրը:

Գնահատելով կոնգրեսի նշանակությունը՝ պետք է արձանագրել, որ, սոցիոլոգիայի տեսական և էմպիրիկ նոր նվաճումները խթանելուց զատ, կոնգրեսը հայ հասարակության լայն զանգվածներին և հարակից գիտական ուղղությունների ներկայացուցիչներին հնարավորություն տվեց ավելի խորությամբ ըմբռնելու սոցիոլոգիայի՝ որպես գիտության ու մասնագիտության առանձնահատկությունները և կարևորությունը արդի ժամանակաշրջանում:

**Ա. Է. ՀՈՎԱԿԻՍՅԱՆ  
Ա. Վ. ՉՍԼՈՅԱՆ**